ԳՐԱԲԱՐԻ ՍԿԶԲՆԱՏԻՊ ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Գրաբարում բայերի պատճառականության իմաստն արտահայտվում է երկու եղանակով՝ ածանցմամբ կամ «տալ (Հազվադեպ՝ **առնել**) բայի դիմավոր ձև - որևէ բայի անորոշ դերբայ» կաղապարով: Հմմտ.* բազմե-ցուցանել/տամ բազմել: *Քննության ենք առել գրաբարի համադրական, այն է՝* -ուցան- *բայածանցով ձևավորված պատճառական բայերի արժույթի դրսևորումներից մեկը՝ խնդրառական արժույթը, որն առ այսօր ուսումնասիրության նյութ չի դարձել:*

Իբրև կանոն, գրաբարի բոլոր պատճառական բայերը, -ուցան- *երկրորդական ձևույթի (վերջինս ունի և՛ բառակազմական արժեք, և՛ միաժամանակ անցողական սեռի քերականական կարգի ցուցիչն է) առկայությամբ պայմանավորված, պարտադիր կերպով պահանջում են առնվազն մի սեռի խնդիր, որը կարող է արտահայտված լինել՝*

ա/ Հայցական հոլովով, ինչպես՝ Մատուցանել զմեզ *ընդ ամենեցուն (ՆԲՀԼ)*[1]*:* ....զպատուիրանապահսն *անմահացուցանել (Ադաթ., 36) և այլն:*

բ/ Տրական հոլովով, որպիսիք պահանջում են բացառիկ բայեր (տիրել, յաղթել), *ինչպես՝ Աստուած* զմեզ *ամենայն* Միջերկրեայց *տիրեցոյց (Խոր., 261): Չչարչարելի բնութիւն Աղամայ առաջնոյ՝* չարչարանաց *յաղթեցուսցես (ՆԲՀԼ):*

գ/ Բացառական հոլովով, որը շարահյուսորեն կոչվում է մասնական ուղիղ խնդիր, ինչպես՝ Ցայթեցուցանել ի կաթուածէ *ի հոգիս (ՆԲՀԼ): Ճաշակեցո՛ ինձ յեփեալ* շիկաթանէդ *(ՆԲՀԼ)*[2] *և այլն;*

դ/ «Հայցական հոլով-բացառական հոլով», կապակցությամբ, ինչպես՝ Առիւծացոյց զմեւս եւս այլ կորիւն ի կորեանց *իւրոց (Եզեկ., ԺԹ, 5)*[3]*: Գայթազղեցուցանել* զմի ի փոքրկանց *(Մատթ., ԺԸ, 6): Կռապաշտեցուցանէին* զյոլովս ի հրէից *(ՆԲՀԼ) և այլն:*

ե/ «Անձնական դերանվան հայցական հոլով - ԻՆՔՆ դերանվան հայցական հոլով» կապակցությամբ, որտեղ վերջին բաղադրիչը կրում է առաջին բաղադրիչին համապատասխան դիմորոշ հոդ, ինչպես՝ Մեք **զմեզ** ինքեանս *գազանացուցանեմք (ՆԲՀԼ) և այլն,*

---

[1] *Լեզվական նյութի մի մասը քաղել ենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»(Վենետիկ, 1836-1837) երկհատորյակի համապատասխան բառահոդվածներից՝ ՆԲՀԼ հղումով:*

[2] *Հմմտ.* Տու՛ ր ինձ ճաշակել ի շիկաթանէդ յայդմանէ *(Ծննդ., Իե, 30), որտեղ նույն իմաստն արտահայտվում է տալ բայի հարադրությամբ ձևավորված պատճառականով:*

[3] *Աստվածաշնչյան լեզվական նյութը բերում ենք գիտական աշխարհին հայտնի ծանոթագրություններով (տե՛ս* Գիրք Աստուծաշունչք Հին և Նոր կտակարանաց, *Վենետիկ, 1860):*

գ/ Երկրորդական նախադասությամբ, ինչպես՝ Հատո՛ ինձ, զոր պարտիս (Մատթ., ԺԸ, 28): Ուսուցիչ քեզ, զոր դու ոչ գիտես (Յովք., ԼԶ, 2): Խելամտացուցանէին զՀրէից, թէ սա է Քրիստոս (Գործ., Թ, 22) և այլն:

Պայմանավորված իրենց հիմնական ձևույթի իմաստային պլանով՝ պատճառական բայերի մի մասը զուրկ է բնության խնդիր պահանջելու զորությունից, մի մասն էլ կարող է պահանջել մեկ (հազվադեպ երկու) բնության խնդիր, որն արտահայտվում է՝

ա/ Տրական, հայցական, բացառական կամ գործիական հոլովով, ինչպես՝ Ապրեցոյց զնա ի թշնամեաց (Ա Թագ., ԺԲ, 10): Զկեանս ժառանգեցուցից նմա (Ագաթ., 84): Ապստամբեցուցանես զորդի քո յինեն (Օրէն., Է, 4): Զանային զանգիտեցուցանել զմեզ սպառնալեօք (ՆԲՀԼ) և այլն:

բ/ Նախդրավոր կապակցություններով, ինչպես՝ Զարացուցին զանձինս ի վերայ եղբարց (Գործ., ԺԴ, 2): Ամուսնացուցանէ զնա ի դուստր իւր (ՆԲՀԼ): Լրջացուցանէ զդէմս առ նոսա (Սիր., Է, 26): Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատ (Խոր., 351) և այլն:

գ/ Երկրորդական նախադասությամբ, ինչպես՝ Յուսացուսցէ (զնոսա), թէ ի Տեառնէ է թագաւորութիւն նորա (ՆԲՀԼ): Հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն զԲարաբբայ (Մատթ., ԻԷ, 20) և այլն:

Թեև պատճառական բոլոր բայերը խնդրառու են, սակայն չունեն խնդրառության միևնույն զորությունը: Այս տեսանկյունից դրաբարի պատճառական բայերը լինում են՝

ա/ միարժույթ, որոնք ի զորու են պահանջելու միայն մեկ (այս դեպքում՝ սեռի) խնդիր: Օրինակ՝ Եւ չատ ցաւեցոյց զմեջք փափուկ օրիորդին Ալանաց (Խոր., 179): Զի էր վերացուցեալ զձեռն՝ ածել ումեք սուսերաւ (Խոր., 230) և այլն:

բ/ Երկարժույթ, որոնք հնարավորություն ունեն պահանջելու երկու խնդիր, ընդ որում, դրանցից մեկը դարձյալ սեռի խնդիր է, իսկ մյուսը՝ բնության: Օրինակ՝ Ի Տեառնէ մերմէ լքեցուցանել զնոսա ոչ կարէին (ՆՀԲ): Ագուցին նոցա զկօշիկս (Բ Մնաց., ԻԸ, 15) և այլն: Պետք է նշել, որ այս խմբի պատճառականները գրաբարում բավականին մեծ թիվ են կազմում:

գ/ Եռարժույթ, որոնք կարող են պահանջել երեք խնդիր. դրանցից մեկը սեռի խնդիր է, երկուսը՝ բնության: Օրինակ՝ Վերահանգուցանէր զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն (ՆԲՀԼ) և այլն: Այս խմբի պատճառականները գրաբարում չափազանց սակավաթիվ են և աչքի են ընկնում գործածության ոչ մեծ հաճախականությամբ:

Քանի որ պատճառական բայերի խնդրառական արժույթի դրսևորման գործում կարևոր դեր է կատարում այն հանգամանքը, թե որ սեռի բայից է սերվում այս կամ այն պատճառականը, ուստի նպատակահարմար է այդ բայերը առանձին խմբերի բաժանել՝ հիմք ընդունելով դրանց ծագումը: Ըստ այդ դասակարգման՝ առանձնանում է պատճառական բայերի երեք խումբ.

Ա. սկզբնատիպ չեզոքներից սերված պատճառականներ[4],

[4] Այս շարքում տեղ են գտել չեզոք և, այսպես կոչված, ձայնակրական բայերը:

Բ. սկզբնատիպ ներգործականներից սերված պատճառականներ[5],
Գ. սկզբնատիպ չունեցող պատճառականներ[6]:

Գրաբարի պատճառական բայերի շարքում սկզբնատիպ չեզոք բայերից սերվածներն առավել մեծ թիվ են կազմում, քան սկզբնատիպ ներգործական բայերից սերված և սկզբնատիպ չունեցող պատճառականները: Անկասկած, հենց առաջին պատճառական բայերը ևս պետք է սերված լինեն ոչ թե սկզբնատիպ ներգործական, այլ սկզբնակատիպ չեզոք սեռի բայերից. մի հանգամանք, որը պայմանավորված է լեզվում չեզոք սեռի բայերի արտահայտած բառիմաստը ներգործական սեռի քերականական իմաստով արտահայտելու անհրաժեշտությամբ: Այս դեպքում սկզբնատիպ չեզոքների բայիմաստին գումարվում է նաև ներգործական սեռի քերականական իմաստը: Մեր հաշվարկով, չեզոք և, այսպես կոչված, ձայնակրական բայերից սերված պատճառականները լեզվական աղբյուրներում կիրառված ողջ պատճառականների չորս հինգերորդ մասն են կազմում:

Սկզբնատիպ չեզոք բայերից սերված պատճառականները խնդրառությամբ լինում են՝ միարժույթ, երկարժույթ և եռարժույթ:

Խնդրառությամբ միարժույթ պատճառականները սերվում են խնդրառությամբ արժութազուրկ չեզոք բայերից, ինչպես՝ ոչնչանալ/ոչնչացուցանել, քոշքոտել/քոշքոտեցուցանել («հորանջեցնել»), գժդմնել/գժդմնեցուցանել, ազնուանալ/ազնուացուցանել, նագել/նագեցուցանել, հեզանալ/հեզացուցանել, կաքաւել/ կաքաւեցուցանել և այլն:

Կարելի է առանձնացնել խնդրառությամբ միարժույթ պատճառական բայերի մի քանի խմբեր, որոնցից են՝

1. անձնանիշ կամ իրանիշ մի շարք գոյականների մասնակցությամբ բաղադրված պատճառականներ, որոնց մի մասը գործածվում է ուղիղ, մյուս մասը՝ փոխաբերական իմաստով: Այսպես՝ ուղիղ իմաստով գործածված պատճառականներից են (ընդգծվում են)՝ անապատացուցանել զաշխարհ (ՆԲՀԼ), առիւծացուցանել (հուն. «առիւծս կարգել») միւս ևս այլ կորիւն ի կորեանցն (Եզեկ., ԺԹ, 5), թագաւորացուցանել զՍաւուղ (Ա Թագ., ԺԵ, 11), մարմնացուցանել զինքն (ՆԲՀԼ), թարախեցուցանել զվէրս (ՆԲՀԼ) շողացուցանել զերկաթ (Բուղ., 45), այրացուցանել զնա (ՆԲՀԼ), լուսացուցանել, մթացուցանել զօդ (ՆԲՀԼ), հեթանոսացուցանել զՍողոմոն (ՆՀԲ), հրեացուցանել զնոսա (ՆԲՀԼ), կնացուցանել զնա (ՆԲՀԼ) և այլն:

Ահավասիկ և փոխաբերական իմաստով գործածված պատճառական բայեր (ընդգծվում են)՝ արձանացուցանել զնախատինս (ՆԲՀԼ), ծմակեցուցանել զհոգին (ՆԲՀԼ), աղբիւրացուցանել զշնորհ (ՆԲՀԼ), լեռնացուցանել զմեզ (ՆԲՀԼ), ծառացուցանել զբուրումն (ՆԲՀԼ), քարացուցանել զսիրտ (Եզնիկ, 167), վարազացուցանել զվնասեալսն (ՆԲՀԼ) և այլն:

---

[5] Այս շարքում տեղ են գտել նաև, այսպես կոչված, հասարակ բայերից սերված պատճառականները, քանի որ հասարակ բայերը առաջին հերթին ներգործական սեռի բայեր են, որոնք, ինչպես բոլոր ներգործական սեռի բայերը, հարկ եղած դեպքում կարող են արտահայտել նաև կրավորական սեռի քերականական իմաստ:

[6] Այս շարքում տեղ են գտել այն պատճառականները, որոնք որևէ սկզբնատիպ կա՛մ չեն ունեցել, կա՛մ էլ,եթե ունեցել են, մեզ չեն ավանդվել:

Նկատելի է, որ այս խմբի որոշ պատճառականներ կարող են առնել նաև մի նախադրաոր խնդրիր, որը, սակայն, ուժեղ և պարտադիր խնդրառության արտահայտություն չէ: Օրինակ՝ գազանացուցանել *զմեզ ինքեանս* ընդդէմ նորա *(ՆԲՀԼ):* Մարմնացուցանել *զինքն* վասն մեր *(Եղիշէ, 87) և այլն:*

2. Խնդրառությամբ արժութազուրկ չեզոք բայերից սերված այն պատճառականները, որոնց համար տիպական է նաև պարտադիր պարագառությունը: Խոսքը վերաբերում է առկայանալ *(ի կողմանս/ի տեղւոջ),* նստիմ *(յաթոռ/ի վերայ գրաստու/ընդ աջմէ),* ներկայանալ, հեծանիմ */ի ջորւոջ/,*վերանալ,ստորիջանել, անցանել */օդովք/,* գնալ */ի տանէս/,* սլանալ *(ընդ բնաւն/ի ծովու), պատճառականներին, որոնք պահպանում են իրենց ելակետ չեզոքի պարագառական արժույթը՝ միաժամանակ պարտադիր կերպով պահանջելով հայցական հոլովով սեռի խնդիր: Այս բայերից են (ընդգծվում են)՝* արշաւեցուցանել *զկառս ընդ չորս անկիւնս (Եզնիկ, 18),* գնացուցանել *զնոսա ընդ շաւիղս (ՆԲՀԼ)* պանդխտացուցանել *զժողովուրդ ի Բաբելոն (Բ Եզր., Ե,12),* ընթացուցանել *զճանապարհորդն ի դուռն կենաց (ՆԲՀԼ) և այլն:*

Այս շարքի բայերի մի մասը ևս կարող է հանդես գալ փոխաբերական իմաստով, ինչպես՝ բարձրացուցանել *զբարբառս առ ո՞ (Ես., ԼԷ, 23),* երամացուցանել *զժողովուրդն առ իս (Ղևտ., Ը, 5) և այլն:*

Մի շարք բայեր (ընդգծվում են) կարող են պարտադիր պարագա առնել տարբեր նախդրավոր կապակցություններով: Հմմտ. դիմեցուցանել *զկառս յամենայն* կողմանս *(Եզնիկ, 18) և՝ զտիկս* ընդ պարիսպն *(ՆԲՀԼ),* նստուցանել *զնա* առաջի դատաւորացն *(Բ Օրէն., Իե, 2),* ի կառս *իւր (Գ Թագ., Ժ, 16),* ընդ աջմէ *քումմէ (Սիր., ԺԲ, 12),* ընդ իշխանս *(Առակ., ԺԸ, 16),* արտաքոյ քաղաքին *(Ծնող., ԻԴ, 11),* բազմեցուցանել *զնա* ի վերոյ *քան զամենեսեան (Եղիշէ, 153) և՝ զնա* ի գահու *(Փարպ., 175) և այլն:*

Պարտադիր պարագառու են նաև վերը նշված բազմաթիվ բայերի նախածանցավոր կազմությունները (ընդգծվում են), ինչպես՝ ստորիջուցանել *զմարմին* ի Սիոնէ *(ՆԲՀԼ),* ներկացուցանել *զմարդն ի* մարմնում *(ՆԲՀԼ),* փոխաբնակեցուցանել *զորդիս* յերկիր *(ՆԲՀԼ),* ընկողմանեցուցանել *զմեռեալն* ի գահոյս *(Բ Մնաց., ԺԶ, 14) և այլն*[7]*:*

Թեև որոշ կիրառություններում պարագաներն արտահայտվում են տրական և բացառական հոլովաձևերով [սասանեցուցանել *զլուծ* յուսոյ *(ՆԲՀԼ),* բացակացուցանել *զմասունս* յարեգականէ *(ՆԲՀԼ) և այլն],* սակայն դրանք առավել հաճախ արտահայտվում են նախդրավոր կապակցու-

---

[7] *Նախածանցավոր և բարդ որոշ միարժույթ կազմություններ զուրկ են պարագառական արժույթից. պատճառն այն է, որ այդ բայերի բաղադրիչներից մեկն արտահայտում է տեղի (տվյալ դեպքում՝ պարտադիր) պարագայական իմաստը: Օրինակ՝* թռուցանել *պատճառականը պարտադիր պարագառու է, մինչդեռ* վերաթռուցանել-ը՝ *ոչ, քանի որ իր իսկ բաղադրիչներից մեկը՝* վեր-ը, *արտահայտում է անհրաժեշտ պարագայական իմաստը: Այսպես պարագառական հնարավորությունից զրկված են նաև* **վզընկեցուցանել** *զնա (ՆԲՀԼ),* վերբուսուցանել *(ՆԲՀԼ),* շուրջբնացուցանել *(ՆԲՀԼ),* որովայնազգեցուցանել *(ՆԲՀԼ),* ենթակացուցանել *(ՆԲՀԼ) և այլ պատճառականներ:*

թյուններով, որոնց միջոցով կարելի է առավել որոշակի արտահայտել տվյալ խոսքահատվածի համար անհրաժեշտ տեղի գաղափարի նրբիմաստը:

Գոյականների մասնակցությամբ բաղադրված մի շարք չեզոք սեռի բայեր կարող են ստանալ բացառական հոլովով պարագա: Դրանցից են՝ անիւնանալ (ի հրոյ), գազաղանալ (ի հրոյ), հովանալ (ի սառնամանեաց), տապանալ (ի տօթոյ), տղմանալ (ի ջրոյ) *և այլն: Այս բայերից սերված պատճառականները չեն ժառանգում բացառականով լրացում առնելու հատկությունը, քանի որ վերջինս ոչ թե արժույթի դրսևորում է, այլ պայմանավորված է խոսքային տվյալ իրադրությամբ: Նմանատիպ պատճառականները զորություն ունեն պարտադիր կերպով առնելու միայն հայցական հոլովով արտահայտված սեռի խնդիր: Հմմտ.* անիւնանալ ի հրոյ և՝ անիւնանացուցանել զտաճար *(ՆԲՀԼ)*, գազաղանալ ի հրոյ և՝ գազաղացուցանել *(«մոխրացնել»)* զբողբոջ *(ՆԲՀԼ)*, ստուերանալ ի լուսոյ և՝ ստուերացուցանել վայրսն *(ՆԲՀԼ): Այսպիսի պատճառականներից են նաև՝* հրացուցանել զկօշիկս//ջուրսն *(Փարպ., 112)*, հովացուցանել զօդս *(ՆԲՀԼ)*, տօթացուցանել, տապացուցանել, քրտնացուցանել զբոյսս *(Ագաթ., 275)*, շնչացուցանել, ծոմացուցանել զանասունս *և այլն:*

Այս շարքի որոշ բայեր կարող են կիրառվել նաև փոխաբերական իմաստով: Օրինակ՝ տղմանալ ի ջուրց, *բայց՝* տղմացուցանել զմիտս *(ՆՀԲ)*, մարմաջիմ ի հարուածոց, *բայց՝* մարմաջեցուցանել զխիղճ *(ՆԲՀԼ)*, ծովացուցանել զաչս *(ՆԲՀԼ)*, խաւարացուցանել զմիտս *(ՆԲՀԼ)*, մանկացուցանել զտիեզերս *(Ագաթ., 351)*, երաշտացուցանել զրնութիւնս *(ՆԲՀԼ) և այլն:*

Նշված որոշ պատճառականներ միաժամանակ առնում են նաև գործիականով բնության խնդիր: Այս օժտվածությունը, սակայն, այդ բայերի համար պարտադիր չէ, քանի որ պայմանավորված չէ դրանց բայիմաստի անմիջական պահանջով (ստուերացուցանել վայրսն ծխով, մարմաջեցուցանել զխիղճ յիշատակօք *և այլն: Գործիականով խնդրի փոխարեն կարող է հանդես գալ նաև դրան համանիշ կապական կապակցություն, ինչպես՝* շնչացուցանել զմարդ ի ձեռն փչման *(ՆԲՀԼ):*

3. Արժութազուրկ բնաձայնական չեզոքներից սերված որոշ պատճառականներ, որոնք նույնպես պահանջում են միայն սեռի խնդիր: Օրինակ՝ շառաչեցուցանել զգեղարդունս *(ՆԲՀԼ)*, կողկողեցուցանել զակն *(Յովբ, ԼԱ, 16)*, ճռուողեցուցանել զթռչունս *(ՆԲՀԼ)*, ճաչեցուցանել զխիղճս *(ՆԲՀԼ)*, դռնչեցուցանել *(այստեղ «հնչեցնել»)* զքարինս *(ՆԲՀԼ), որոնցից վերջիններիս իմաստը փոխաբերական է:*

4. Ածականով բաղադրված մի խումբ պատճառականներ, որոնք սերվել են խնդրառությամբ արժութազուրկ չեզոքներից, ինչպես՝ անզգամեցուցանել *զամբարիշտս (Առակ., ԺԳ, 6)*, արդարացուցանել[8] *զԱստուած (Ղուկ., Է, 29)*, զօրացուցանել, անզօրացուցանել զիզօրս *(ՆԲՀԼ)*, մեծացուցանել *զԴանիէլ (Դան., Բ, 48)*, խոշորեցուցանել *(«խոժոռեցու-*

---

[8] *Սկզբնատիպ չեզոք* արդարանալ *բայը կարող է պահանջել բացառականով խնդիր, սակայն ոչ թե բուն, այլ երկրորդական իմաստի («զերծ, ազատ մնալ») առկայության դեպքում: Օրինակ՝* արդարանալ ի բանից քոց:

ցանել») զսողս (ՆԲՀԼ), բազմացուցանել *զուրախութիւն (Ագաթ., 284)*, թշուառացուցանել *զմեզ (Ես., ԼԳ, 1) և այլն, որոնց մի մասը կարող է հանդես գալ նաև փոխաբերական իմաստով, ինչպես՝* արդարացուցանել *զսիրտ (Սաղմ., ՀԲ, 13)*, սղացուցանել *զճշմարտութիւն (ՆԲՀԼ) և այլն:*

Երկարժույթ *են համարվում խնդրառությամբ չեզոք սեռի միարժույթ բայերից սերված այն պատճառական բայերը, որոնք, սեռի խնդրից բացի, պահանջում են նաև մի բնության խնդիր: Օրինակ՝* Մի՛ յուսացուցէք *զձեզ Եզեկիա ի Տէր (Դ Թագ., ԺԸ, 30):* Ուրացուցանէր *ի նմանէ զամենայն հաւատացեալս (Եղիշէ, 88) և այլն:*

Եթե սեռի խնդրի առնելու զորությունն այս բայերը ձեռք են բերում չնորհիվ –ուցան- *բայածանցի, ապա բնության խնդիր առնելու զորությունը ժառանգում են իրենց սկզբնատիպ չեզոքներից:*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատճառական բայերի՝ սկզբնատիպ չեզոքներից ժառանգած բնության խնդրի արտահայտության միջոցը և քերականական իմաստը մեծավ մասամբ մնում են անփոփոխ: Հմմտ. մնալ *նմա և՝* մնացուցանել *ոսկի նմա,* օտարանալ *ի նմանէ և՝* օտարացուցանել *զորդի ի հօրէ,* պարարտանալ *պտղով և՝* պարարտացուցանել *զայգիս ջրով,* ապաւինիմ *յԱստուած և՝* ապաւինեցուցանել *զխաչահանունսն յինքն և այլն: Սակայն պետք է նկատել, որ սկզբնատիպ չեզոք սեռի բայի և նրանից սերված պատճառականի բնության խնդրի ձևաիմաստային դրսևորումները միշտ չէ, որ համապատասխանում են: Հմմտ.* բարկանալ ի վերայ եղբարց/բարկացուցանել զիս օտարոտուվք, ամաչեսցես յեգիպտոսէ/իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց *և այլն:*

Չեզոք սեռի միարժույթ բայերից սերված երկարժույթ պատճառական բայերը, սեռի խնդրից բացի,պարտադիր կերպով պահանջում են նաև բնության խնդիր, որը կարող է արտահայտված լինել՝

ա/ Տրական հոլովով[9]. այսպիսի բնության խնդիր առնող երկարժույթ պատճառականներից են՝ հանոյացուցանել, հանդիպեցուցանել, միաբանեցուցանել *և այլն, ինչպես՝* արժանացուցանել *զվճառեալն* գնոյ *(ՆԲՀԼ),* ընտանեցուցանել[10] *զմեզ* բանականաց *(ՆԲՀԼ),* դիպեցուցանել *զերեքթեւեանն* տախտակից *(Խոր., 36),* նմանեցուցանել *զո* ինքեանց *(Փարպ., 111) և այլն:*

---

[9] *Տրական հոլովով բնության խնդիր առնող միարժույթ չեզոքից սերված* իգացուցանել *պատճառականը պահանջում է ոչ թե տրական, այլ բացառական հոլովով բնության խնդիր: Հմմտ.* իգանալ նմա / իգացուցանել զստեղծուածն ի ստեղծուածէն *(ՆԲՀԼ), իսկ* սովացուցանել *պատճառականի դիմաց ՆԲՀԼ-ն նշում է մի դեպքում տրական, մյուս դեպքում՝ բացառական հոլովով առահայտվող բնության խնդիր: Հմմտ.* սովեցուցանել զմարմին պունկութեան *և՝* ի պոռնկութենէ *(ՆԲՀԼ):*

[10] *Նշված բայերից մի քանիսը պահանջում են (մյուսները թեև չեն պահանջում, բայց ենթադրում են) գործականով բնության խնդիրներ, որոնք, սակայն, չեն կարող համարվել արժույթի դրսևորման բուն միջոց, քանի որ դրանց առկայությունը անմիջականորեն պայմանավորված չէ տվյալ բայերի բառային իմաստով: Հմմտ.* ծանօթացուցանել գնոյն նոցա բանիւ, հանեցուցանել զմեզ Աստուծոյ բանիւք *(ՆԲՀԼ),* միաբանեցուցանել զանձն Աստուծոյ նոքօք *(ՆԲՀԼ),* ընտանեցուցանել, հաւատացուցանել *և այլն:*

Նկատելի է, որ այս ենթախմբի պատճառականներն ավելի հաճախ կիրառվում են ուղիղ, քան թե փոխաբերական իմաստով:

Տրականով խնդրառու մի շարք բայեր զուգահեռաբար կարող են խնդիր պահանջել նաև նախդրավոր կապակցություններով, որոնք տրականով խնդիրների հետ քերականական համանիշներ են: Հմմտ. հայիմ հարուածոց *(ՆԲՀԼ), հայիմ* յերեսս *(Մննդ., ԺԹ, 28) և՝ հայիմ* ընդ երեսս *(Մննդ., ԺԸ, 16):*

բ/ Հայցական հոլովով, որը հայտնի է որպես երկրորդական ուղիղ խնդիր: Այսպիսիք են կալ, նստիմ, դառնալ, թուիմ *և այլ չեզոք բայերից սերված* կացուցանել, նստուցանել, դարձուցանել, թուեցուցանել *և այլ պատճառականներ: Հատկանշական է, որ բերված սկզբնատիպ չեզոք բայերը ելակետային վիճակում հանդես են գալիս, այսպես կոչված, վերացական բայերի գործառույթով՝ կիրառվելով որպես բաղադրյալ ստորոգյալի հանգույց: Օրինակ՝ Խոյ մի* կախեալ կայր *զծառոյն (Մննդ., ԻԲ, 13):* Կացիցես ծառայ *քո (Մննդ., ԽԴ, 33) և այլն: Նշված տիպի նախադասությունների ստորոգելիները պատճառական կառույցներում հանդես են բերում երկրորդական ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ՝ ցույց տալով այն փոփոխությունը, այն վիճակը, որին վերածվում է բուն ուղիղ խնդիրը: Օրինակ՝* Զեղբայր *իւր՝ զերուազ,* քրմապետ *կացուցանէր (Խոր., 166):* Նստուցանէ զնոսա *իշխանս (Սաղմ., ՃԺԲ, 8) և այլն:*

գ/ Բացառական հոլովով: Այսպիսի բնության խնդիր առնելու հատկությունը պատճառական բայերը ժառանգում են սկզբնատիպ չեզոք միարժույթ բայերից: Հմմտ. առանձնանալ *ի միմեանց (ՆԲՀԼ) և* առանձնացուցանել *զնոսա ի բազմութենէ (ՆԲՀԼ)*[11], սթափիմ *ի գինւոյ (Մննդ., Թ, 24) և՝* սթափեցուցանել *զմիտս ի սրտմտութենէ (ՆԲՀԼ) և այլն:*

Տրականով բնության խնդիր առնող երկարժույթ պատճառականների համեմատությամբ այս ենթախմբի բայերը նկատելիորեն հաճախադեպ են, ակտիվորեն կիրառվում են թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստներով: Ահավասիկ ուղիղ իմաստով կիրառության դեպքեր՝ մեկուսացուցանել զերանելիս *ի միմեանց (Եղիշէ, 173),* ապստամբեցուցանել զորդի *քո յինէն (Բ Օրէն., Է, 5)*[12], ապրեցուցանել զքեզ *ի նեղութենէ (Ես., ՄԷ, 13)*[13], թաքուցանել զպատուիրանս *յինէն (Սաղմ., ՃԺԸ, 19),* անյայտեցուցանել զվայելչութիւն *ի տեսողացն (ՆԲՀԼ),* զարթուցանել զձեզ *ի քնոյ (Բ Պետր., Ա, 23)*[14], յարուցանել զնա *ի մեռելոց (Եփես., Ա, 20) և այլն:*

Փոխաբերական իմաստով գործածված և խնդրառությամբ երկարժույթ պատճառականներից են՝ արբուցանել *զնետս յարենէ (Բ Օրէն., ԼԲ,*

---

[11] *Բայս կարող է պահանջել նաև նախդրավոր կապակցությամբ բնության խնդիր, ինչպես՝* զերծուցանել *զիս յարքայութիւն (Բ Տիմ., Դ, 18):*

[12] *Հմմտ.* Զաշխարհն ապստամբեցուցանել *յուրացութիւն (Եղիշէ, 92):*

[13] *Փոխաբերաբար նույն իմաստով կիրառվում է* կեցուցանել-ը (զնա *յատելեաց*):

[14] *Հմմտ.* զարթուցանել զնա *ի վերայ մեր (Բարուք., Բ, 9), որտեղ* զարթուցանել-ը *կիրառվել է փոխաբերական իմաստով:*

42), ցածուցանել *զսրտմտութիւն իմ յորդւոց (Թիւ., Իե, 11)*, թեթևացուցանել *զմեզ ի ծառայութենէ (Գ Թագ., ԺԲ, 4)*, սառուցանել *զամենայն ի սիրոյն Աստուծոյ (Եղիշէ, 166)* և *այլն:*

Բերված շարքում տեղ են գտել նաև այն պատճառականները, որոնք առնում են բացառականով արտահայտված ոչ թե խնդիր, այլ պարագայական խնդիր (այս հատկանիշը ևս պատճառականները ժառանգել են իրենց սկզբնատիպ չեզոքներից): Դրանցից են՝ խելագարեցուցանել, խլրտացուցանել, դողացուցանել, շ/լ/մորեցուցանել *(«խուճապահարել») զմիտս ի բանից (ՆԲՀԼ)*, կափուցանել, շրտուցանել *զնա ի տեսլենէ (ՆԲՀԼ)* և *այլն*[15]*:*

դ/ Կան պատճառականներ, որոնց հետ կապակցվել են գործիականով լրացումներ: Օրինակ՝ անօսրացուցանել անօք, կակղացուցանել քաղցրաբանութեամբ, զարթուցանել յիշատակօք, թուլացուցանել չարչարանօք, խաղաղացուցանել սովաւ *և այլն, որոնք, սակայն, չեն բխում այդ բայերի իմաստի պարտադիր պահանջից, ուստի և չեն համարվում նրանց արժույթի լիարժեք դրսևորումները:*

Բազմաթիվ երկարժույթ պատճառականներ բացառականով բնության խնդրի փոխարեն առնում են սրանց քերականական համանիշը՝ արտահայտված նախդրավոր կապակցությամբ: Օրինակ՝ պատկառեցուցանել *զնա* յերեսաց *Տեառն*, կեցուցանել *զնա* ի ձեռաց *ատելեաց*, զարհուրեցուցանել *զնոսա* յերեսաց *Իսրայելի (Բ Մնաց., ԺԷ, 2)* և *այլն:*

Գործիական հոլովով խնդրառու պատճառական բայերը ևս իմաստային տեսանկյունից միատարր չեն:

Առանձին շարք են կազմում այս խմբի այն բայերը, որոնք գործիականով բնության խնդիր առնելու զորությունը ժառանգում են սկզբնատիպ չեզոք բայերից: Հմմտ. ուժգնանալ ողջախոհութեամբ *(ՆԲՀԼ)* և՝ ուժգնացուցանել զսպառազինեալն նովաւ *(ՆԲՀԼ)*, պարարտանալ պտղով *(ՆԲՀԼ)* և՝ պարարտացուցանել գիս սիրով *(ՆԲՀԼ)*, շքեղանալ մատանեաւ և հանդերձիւ *(ՆԲՀԼ)* և՝ շքեղացուցանել զնա զարդու *(Ագաթ., 29)* և *այլն: Փաստորեն այս խմբի պատճառականների՝ գործիականով արտահայտված բնության խնդիրները պարտադիր են, քանի որ ուղղակիորեն բխում են այդ բայերի իմաստի անմիջական անհրաժեշտությունից, ինչպես՝* ստուարացուցանել զգունդն զինուորօք *(Եղիշէ, 63)*, խիզախեցուցանել[16] զնոսա անուամբն *(ՆԲՀԼ)*, զարդարեցուցանել հարսունս պանուճանօք *(ՆԲՀԼ)*, գարշեցուցանել զանձինս սողնովք *(Ղևտ., ԺԱ, 43)*, ընդելուցանել զքաց ոսկւով *(Ել., ԼԹ, 13)* և *այլն:*

Այս շարքի բայերի մի մասը գործածվել է և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով, որոնցից վերջիններս ավելի հաճախ հանդիպում են հետագա դարերի լեզվական աղբյուրներում, ինչպես՝ թանձրացուցանել

---

[15] Անձկացուցանել *պատճառականը բացառականով բնության խնդիր պահանջելու հատկությունը ժառանգել է ոչ թե սկզբնատիպ չեզոքից* (անձկանալ *չեզոքը ևս միարժույթ խնդրառու բայ է, սակայն առնում է «ԱՌ+հայցական հոլով» նախդրավոր կապակցությամբ արտահայտված խնդիր), այլ ձեռք է բերել շնորհիվ փոխաբերական իմաստի: Օրինակ՝* անձկացուցանել զնա ի յիշատակէ *(ՆԲՀԼ):*

[16] *Հմմտ. Խիզախեցուցանել զծովականս՝ տալ զանձինս ի միջոց ծովուն (ՆԲՀԼ):*

պիշատակ օրինակաւ (ՆԲՀԼ), փարթամացուցանել[17] *զոք հոգևորօք (ՆԲՀԼ)*, երիցացուցանել *զերկին պատմութեամբ (ՆԲՀԼ)*, ճոխացուցանել *զիս մտօք (ՆԲՀԼ)*:

Առանձին խումբ են կազմում այն պատճառականները, որոնք գործականով բնության խնդիր առնելու զորությունը ժառանգում են ոչ թե սկզբնատիպ չեզոք բայերից, որոնցից իրենք սերվել են, այլ պատճառականի վերածվելուց հետո՝ ըստ նոր ձեռք բերած իմաստի պահանջի: Այսպես՝ հրաշանալ *միարժույթ չեզոք սեռի բայի պահանջած բնության խնդիրն արտահայտվում է «ԸՆԴ- -հայցական հոլով» մասնակաղապարով՝* Հրաշանան արարածք ընդ յաղթութիւնս սրբոց *(ՆԲՀԼ), մինչդեռ նրանից սերված* հրաշացուցանել *պատճառականը, սեռի խնդրից բացի, պահանջում է նաև մի բնության խնդիր, որն արտահայտված է ոչ թե նախդրավոր կապակցությամբ, այլ գործական հոլովով: Օրինակ՝* Զմարգարէսն հրաշացոյց յայտնութեամբ գաղտնեաց *(ՆԲՀԼ): Այսպիսի պատճառականներից են (ընդգծվում են)՝* ջեր/ռացուցանել *զմիտս հրով (ՆԲՀԼ)*, փափկացուցանել *զմեզ զգեստիւք (ՆԲՀԼ)*, խանդաղատեցուցանել *զնոսա բանիւք (ՆԲՀԼ)*, զգածուցանել *(«համակել», «շաղախել տալ») զխորհուրդս ամբարշտութեամբ (ՆԲՀԼ)*, փայլեցուցանել, արտափայլեցուցանել *զինքեանս աստուածային գեղովք (ՆԲՀԼ)*, լոգացուցանել *(ջրով) զանձն նորա (Բուզ., 174)* և *այլն:*

Խնդրառությամբ երկարժույթ մի շարք պատճառականներ էլ սերվել են այն չեզոքներից, որոնք նշված տեսակետից արժութազուրկ են, ինչպես՝ գիրացուցանել *զմարմին թանձրութեամբ (ՆԲՀԼ)*, սրտացուցանել *(«քաջալե-ռել») զմեզ ակամբ (Երգ., Դ, 9)*, գիշերացուցանել *զմեզ ստուերաւն (ՆԲՀԼ)*, ջահացուցանել *զոգի արտասուօք (ՆԲՀԼ)*, ծովացուցանել *զաչս արտասուօք (ՆԲՀԼ)* և *այլն: Նկատելի է, որ այս խմբի պատճառականներից մի քանիսը երկարժույթ են դարձել շնորհիվ փոխաբերական իմաստի:*

Ինչպես նշել ենք, սկզբնատիպ չեզոքների և սրանցից սերված պատճառականների արժույթը միշտ չէ, որ դրսևորվում է ձևաիմաստային միևնույն միջոցներով: Ավելին՝ այս առումով նկատելի է հետևյալ օրինաչափությունը. սկզբնատիպ միարժույթ չեզոք բայերի պահանջած պատճառի բացառականի փոխարեն՝ այդ բայերից սերված պատճառականները պահանջում են միջոցի գործական: Հմմտ. ծիրանանալ յարենէ *(ՆԲՀԼ)* և՝ *ծիրանացուցանել զեկեղեցին* արեամբն *(ՆԲՀԼ), խլանալ* ի բանից *(ՆԲՀԼ)* և՝ *խլացուցանել զլսելին* գոչմամբ *(Եղիշէ, 117), ցամաքիմ* ի ջուրցն պակասութենէ *(Ես., Ծ, 2)* և՝ *ցամաքեցուցանել զհող* հիւթովք *(ՆԲՀԼ)* և *այլն:*

Երկարժույթ այս բայերի մի մասը դասային տեսանկյունից անվանում են անձնանիշ գոյականներին հատուկ գործողություն, ինչպես՝ ամաչեցուցանել *զնա որով (ՆԲՀԼ)*, ցնորեցուցանել, խելացնորեցուցանել, զառանցեցուցանել *զձեզ բանիւք (Կող., Բ, 4)*, զարմացուցանել *զնա սքանչելեօք,*

---

[17] *Բայս թեև սերվել է գործական հոլովով խնդիր առնող չեզոքից, սակայն հետագայում ձեռք է բերել նաև բացառականով բնության խնդիր պահանջելու զորություն: Հմմտ.* փարթամացուցանել զգանձարանսդ ի լիութենէ *(ՆԲՀԼ):*

յիմարեցուցանել, ապշեցուցանել *զնոսա մոգութեամբ (Գործ., Ը, 11)*, թմբրեցուցանել *զնա անապակաւ (Եղիշէ, 138)*, տկարացուցանել[18] *զբազումս օրինօք (Մաղաք., Բ, 8)* և այլն:

Այս խմբի մի շարք բայեր գործածվել են փոխաբերական իմաստով, ինչպես՝ նսեմացուցանել *զպարծանս խավարաւ (ՆԲՀԼ)*, աղօտացուցանել *(կախարդանօք) զզօրութիւնն (ՆԲՀԼ)*, կանաչեցուցանել *զմեզ ի մեռելութենէ (ՆԲՀԼ)*, ցամաքեցուցանել *զսիրտ ի մտածութեանց (ՆԲՀԼ)*, զկծեցուցանել *զնա իւ (ՆԲՀԼ)*, դառնացուցանել *զիս գործովք (Երեմ., ԽԴ, 8)* և այլն:

Ե/ Պատճառականների մի մասն էլ լրացում է պահանջում նախդրավոր կապակցությամբ, որպիսիք պահանջելու հատկությունը այս խմբի պատճառականները սովորաբար ժառանգում են իրենց սկզբնատիպ չեզոքներից: Ասվածին հակառակ՝ բոլոր պատճառական բայերը չէ, որ զորություն ունեն նախդրավոր կապակցությամբ լրացում առնելու: Տեսականորեն հնարավոր է պատճառականների՝ ցանկացած նախդրավոր կապակցությամբ խնդիր (կամ պարագա) առնելը. չէ՞ որ ամեն մի նախդիր կամ նախադրություն այդպիսին է համարվում ամենից առաջ բայական անդամի լրացման բաղադրիչի գործառույթ կատարելու պայմանով:

Կան երկարժույթ պատճառականներ, որոնց հետ բնության խնդիրը կապակցվում է միայն միջնորդական կառավարման եղանակով, ինչպես՝ շարամօտեցուցանել, յուսացուցանել *զժողովուրդդ ի նանրութիւնս (Երեմ., ԻԸ, 15)*, նայեցուցանել *զաչս մտաց ընդ Աստուած (ՆԲՀԼ)*, մարտուցանել *զմեզ ընդ ամենեցուն (ՆԲՀԼ)*, ապաւինեցուցանել *զխաչահանուն յինքն (ՆԲՀԼ)*, կոուեցուցանել *զնոսա ընդ ասողին (ՆԲՀԼ)*, մաքառեցուցանել *զչարս ընդ հրէայս (ՆԲՀԼ)* և այլն:

Նկատելի է նաև, որ մի շարք երկարժույթ պատճառականներ կարող են միջնորդական կառավարմամբ կապակցվել տարբեր նախդրավոր կապակցությունների հետ: Հմմտ. ընդելացուցանել *զբերան* ընդ անխրատութիւն *(Սիր., ԻԳ, 17)* և՝ յերդումն *(Սիր., ԻԳ, 9)*, յանգուցանել *զսիրտ յինքն (Բ Թագ., ԺԵ, 6)* և՝ *զոսկի* առ ինքն *(ՆԲՀԼ)*, թագաւորեցուցանել *զՊապ* ի վերայ աշխարհին *Հայոց (Բուզ., 155)*, *զՍաւուղ* ի թագաւոր *(Ա Թագ., ԺԵ, 11)* և՝ *զԱրշակ* փոխանակ իմ *(Բուզ.,49)*[19], սաստկացուցանել *զպատերազմն* ի վերայ նոցա *(Ա Մակ., Բ, 35)* և՝ **ընդ քաղաքին** *(Բ Թագ., ԺԱ, 25)* և այլն:

Այս խմբի բազմաթիվ պատճառականներ կիրառվել են իրենց փոխաբերական իմաստ(ներ)ով: Օրինակ՝ եռացուցանել *զինքն ի ցանկութիւն (ՆԲՀԼ)*, յանգուցանել *զմիտս ի նա (Բուզ.,104)*, անցուցանել *չարչարանս ընդ մոգսն (Եղիշէ,129)*, նայեցուցանել *զաչս մտաց ընդ Աստուած (ՆԲՀԼ)*, հակառակեցուցանել *զմիտս ընդ գրոց (ՆԲՀԼ)*, սովորեցուցանել *զսիրտս յայս (ՆԲՀԼ)* և այլն:

---

[18] *Բայիս սկզբնատիպ չեզոքը կարող է պահանջել նաև սահմանափակման գործիական: Օրինակ՝* տկարանալ *ձեռամբ (Դ Թագ., ԺԹ, 26)*:

[19] Թագաւորեցուցանել-ը *այս դեպքում կարող է ենթադրել նաև խնդրառության երրորդ եզր (ի վերայ Հայոց)*:

Երկարժույթ պատճառականներից մի քանիսը (իմաստնացուցանել, բարեկամեցուցանել և այլն), սեռի և նախդրավոր կապակցությամբ արտահայտված բնության խնդիրներից բացի, առնում են նաև մի գործիականով բնության խնդիր, որը, սակայն, չի բխում տվյալ բայիմաստի անմիջական արտահայտությունից:

Եռարժույթ են համարվում այն պատճառական բայերը, որոնք, սերվելով միարժույթ կամ երկարժույթ չեզոքներից, պարտադիր սեռի խնդրից բացի, զորություն ունեն պահանջելու նաև ոչ թե մեկ, այլ երկու բնության խնդիր: Բնական է, որ այս դեպքում բնության խնդիրները կունենան ձևի և իմաստի տարբեր դրսևորումներ [հակառակ դեպքում դրանք կլինեն համազոր անդամներ և կհամարվեն որպես միևնույն արժույթի մեկից ավելի, այսինքն՝ բազմակի դրսևորումներ, ինչպես՝ քնքշեցուցանել զմանկութիւն լորամարգիւ և մանանայիւ (ՆԲՀԼ)]:

Բազմաթիվ պատճառականներ ի զորու են որպես խնդրառության երրորդ եզր առնել գործիականով բնության խնդիրներ: Օրինակ՝ զնստուցանել զմիտս ի հպարտութենէն նոքօք (Եզնիկ, 147), խաղաղացուցանել զազգս ի վրդովմանց սովաւ (ՆԲՀԼ), զգեցուցանել հանճար ինձ աղօթիւք (ՆԲՀԼ), միաբանեցուցանել զանձն Աստուծոյ նոքօք (ՆԲՀԼ) և այլն: Նկատելի է, սակայն, որ բերված գործիականները թույլ, ոչ պարտադիր կառավարման դրսևորումներ են. բանն այն է, որ գործիականով բնության խնդիրներից քչերը կարելի է համարել իբրև խնդրառական արժույթի երրորդ եզր: Վերջինս պահանջող եռարժույթ պատճառականներ կարելի է դիտել միայն մի քանի բայեր, ինչպես՝ տեղեկացուցանել զամենայն ինձ գրով (Բ Եզր.,Դ, 18), մածուցանել զձկունս ի թևս որով (Եզեկ., ԻԹ, 18) և այլն:

Գրաբարում առանձնանում են չեզոք սեռի բայերից սերված մի քանի եռարժույթ պատճառականներ միայն, որոնց պահանջած երրորդ բնության խնդիրն արտահայտված է կամ ենթադրվում է ոչ թե գործիական հոլովով, այլ դրանից տարբեր արտահայտության միջոցով: Այդպիսի պատճառականներից են՝ գիտակացուցանել զլուր մեզ վասն այնորիկ (ՆԲՀԼ), կենսացուցանել զոք ինչ մեռելութենէ յէութիւն (ՆԲՀԼ), ճասուցանել զտանջանս ի վերայ չարագործին ի Տեառնէ (Բ Մակ., Դ, 33), ածանցուցանել զամենայն ինչ ի չգոյութենէ ի գոյութիւն (ՆԲՀԼ), վերահանգուցանել զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն (ՆԲՀԼ), վերադարձուցանել զնա ի մահուանէ ի կեանս (ՆԲՀԼ), գոյացուցանել զորդի ի չգոյէ ի գոյ (ՆԲՀԼ) և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չեզոք սեռի բայերից սերված պատճառականները խնդրառությամբ լինում են միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ, որոնցից վերջիններն աչքի են ընկնում սահմանափակ թվով: Խնդրառությամբ միարժույթ պատճառականները պարտադիր ենթադրում կամ պահանջում են մի սեռի խնդիր, երկարժույթ պատճառականները, սեռի խնդրից բացի, ենթադրում կամ պահանջում են նաև մի բնության խնդիր, իսկ եռարժույթ պատճառականները, սեռի խնդրից բացի, ենթադրում կամ պահանջում են նաև երկու բնության խնդիր: Ընդ որում, դրանց բոլորի ենթադրած կամ պահանջած սեռի խնդիրը գերազանցապես արտահայտվում է հայցական հոլովով, իսկ բնության խնդիրները՝ տրական, բացառական կամ գործիական հոլովով և կամ էլ նախդրավոր

կապակցությամբ: Չեզոք սեռի բայերից սերված պատճառականները սեռի խնդիր պահանջում են՝ պայմանավորված իրենց քերականական, իսկ բնության խնդիր՝ պայմանավորված իրենց բայական-բառային իմաստով: Առավել հետաքրքրական են այն պատճառականները, որոնք բնության խնդիր պահանջելու հատկությունը ոչ թե ժառանգել են իրենց սկզբնատիպ չեզոքներից, այլ պատճառականի վերածվելուց հետո:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. - *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:*
Բուզ. - *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս.Պետերբուրգ, 1883:*
Եզնիկ - *Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826.:*
Եղիշէ - *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:*
Խոր. - *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:*
ՆԲՀԼ - *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:*
Փարպ. - *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:*

ВАЛЕНТНОСТЬ ПО ДОПОЛНЕНИЯМ КАУЗАТИВНЫХ ГЛАГОЛОВ, МОТИВИРОВАННЫХ ПЕРВООБРАЗНЫМИ НЕПЕРЕХОДНЫМИ ГЛАГОЛАМИ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Г. К. ХАЧАТРЯН

РЕЗЮМЕ

Первообразные непереходные глаголы по валентности бывают одновалентными, двувалентными и трехвалентными. Последние, трехвалентные, не составляют большого числа. Двувалентные каузативы, помимо прямого дополнения, требуют еще одно косвенное дополнение, а трехвалентные каузативы, кроме прямого дополнения, требуют два косвенных дополнения. Требование прямого дополнения обусловлено грамматическими свойствами каузативов, а косвенных дополнений – семантикой глагольного слова. Причем, если прямое дополнение выражается преимущественно В.п., то косвенные дополнения выражаются Д., Тв. или П. падежами и союзным сочетанием. Наибольший интерес представляют те каузативы, которые требуют косвенных дополнений не от первообразных непереходных глаголов.